12550

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«10» 11 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 263 - 25

Նախաձեռնող՝ ***«Էկո Ագրո» ՍՊԸ***
Երևան, Մ.Մկրտչյան թաղ., 1 փող., 39 շին.

Գործունեությունը՝ ***Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի Մ. Մկրտչյան թաղ. 1-ին փողոց 32/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի բացօթյա սպորտային համալիրի և շատրվանի կառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 263 - 25

« 10 » 11 2025թ.

Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի Մ. Մկրտչյան թաղ. 1-ին փողոց 32/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի, բացօթյա սպորտային համալիրի և շատրվանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Էկո Ագրո» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզ, Աբովյան համայնք,

Ներածական մաս. Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի Մ. Մկրտչյան թաղ. 1-ին փողոց 32/2 հասցեում նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենքեր, բացօթյա սպորտային համալիր և շատրվան: Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Առինջ բնակելի թաղամաս» ծրագրի մի մասը: Բնակելի, հասարակական նշանակության շինությունները գտնվում են 80 մ և ավել հեռավորությունների վրա:

Հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի բ. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել 07-011-0274-0030 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 23122024-07-0173 վկայականը և Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի կողմից 2025 թվականի փետրվարի 10-ին տրամադրած ճարտարապետահատակագծային N ՆԹ-0576-25 առաջադրանքը:

Նախատեսվում է կառուցել 2 մուտք ունեցող 2 բազմաբնակարան և 1 մուտք ունեցող 1 բազմաբնակարան շենքեր, որոնք ունեն ստորգետնյա 2 հարկ ավտոկայանատեղի և 6-9 հարկ բնակելի տարածքներ: Նախատեսվող գործունեության տարածքն ազատ է կառուցապատումից:

Գործունեության իրականացման տարածքի տեխիկատնտեսական ցուցանիշերն են.

Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը՝ 8256.4 մ²

կառուցապատման մակերեսը՝ 2856 մ²– 35 %,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 38 923 մ^2,
ճանապարհ, մայթ և այլ՝ 1881 մ^2 – 22 %,
կանաչապատման մակերեսը՝ 3519 մ^2 – 43 %,
բնակարանների ընդհանուր թիվը՝ 203 բնակարան,
ստորգետնյա ավտոկայանատեղիների քանակը՝ 112:

Բնակարանների սանհանգույցներից և խոհանոցներից նախատեսված են բնական արտածման համակարգեր:

Վերգետնյա ավտոկայանատեղիները նախատեսվում է իրականացնել ջրաթափանց (գեոցանցով) մակերեսներով: Արտաքին հարդարման նյութերը կլինեն բարձրորակ բնական կամ արհեստական քարե և ճակատային սվաղով երեսպատումով: Պատուհանները նախատեսված են էներգախնայող երկխցիկ ապակե փաթեթներով: Առկա է երկակի նշանակությամբ ավտոկայանատեղի, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Նախատեսված է նաև հակահրդեհային համակարգ: Հրշեջ ծորակների մոտ անհրաժեշտ ճնշում և ջրաքանակ ապահովելու համար նկուղային -6,60 և -6,90 նիշերում նախատեսված են ջրամբար և պոմպակայան: Շենքերի տանիքները նախատեսված է իրականացնել հարթ, ջրահեռացումը ներքին հորաններով նախատեսվում է միացնել ընդհանուր անձրևատար համակարգին:

Տարածքում նախատեսվում է շատրվանային գոտի: Շատրվանների տեխնիկական սպասարկումն իրականացվելու է ջրի ցիկլային շրջանառման միջոցով: Խնայողության նպատակով ջուրը կօգտագործվի միայն համակարգի լրասնուցման համար:

Միջբակային տարածքների բարեկարգման նպատակով նախատեսվում է կառուցել մարզական սարքավորումներ և հարմարանքներ (մետաղյա կոնստրուկցիաներից):

Բետոնախառնուրդը, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվելու են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած 10.9 տ կենցաղային և շինարարական աղբը՝ 280 մ^3 ծավալով, ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

Բնակելի թաղամասի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի, միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին:

Շինարարության փուլում ջրցանի համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Աբովյան քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 20072 մ^3 ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր, հանվող 15727 մ^3 ծավալով զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր: Կանաչապատումը կիրականացվի համաձայն կանաչապատման նախագծի, համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Բուն գործունեության տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում պատմամշակութային և բնության հուշարձաններ չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-շինարարական հրապարակում փոշու առաջացումը կանխարգելելու նպատակով օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար իրականացնել ջրցան,

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի, ինչպիսիք են ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, հողային զանգվածները) և թափոնների տեղափոխումն իրականցնել փակ ծածկով մեքենաներով,

- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,

-իրականացնել շինհրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անիվների լվացում,

-բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,

-փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չպահեստավորել,

-պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,

-անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը նախատեսվում է ուղորդել պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է 100 մ^3 ծավալով տարողություն, որի ծավալն ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 2000 մ^2 մակերեսով տարածքի վրա: Պարզարանում մեխանիկական նստեցումից հետո պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,

- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

-օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- հողերի աղտոտվածության մոնիթորինգ,
-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
-հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

Շինարարության փուլում բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսվում է մասնահանել՝ 3 700 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի Մ. Մկրտչյան թաղ. 1-ին փողոց 32/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի, բացօթյա սպորտային համալիրի և շատրվանի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքի Առինջ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանն ու Աբովյանի համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աբովյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
6. Բացառել գործունեության իրականացման տարածքում ծառերի և թփերի հատումը:
7. Իրականացնել շինհրապարակ մուտք գործող և դուրս եկող մեքենաների անիվների լվացում:
8. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
9. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ, Կառավարության 2018 թվականի փետրվարի N 108 որոշման պահանջներին և Աբովյանի համայնքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի համապատասխան:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էկո Ագրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի Մ. Մկրտչյան թաղ. 1-ին փողոց 32/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի, բացօթյա սպորտային համալիրի և շատրվանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան